

ԿԱՐԾԻՔ

Վարդուհի Գազիկի Միրիջանյանի *Իրավաբանական փաստաթղթերի թարգմանության խնդիրը գործառական- հաղորդակցական լույսի ներքո* թեմայով

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության վերաբերյալ

Ներկայիս աշխարհաքաղաքական և հասարակական համատեքստում մեծ է իրավական փաստաթղթերի, հատկապես պայմանագրերի դերն ու նշանակությունը ներպետական և միջպետական հիմնախնդիրների կարգավորման գործընթացում, քանի որ դրանք ի գործ են կարգավորելու կոնկրետ խնդիրների վերաբերող անհատական, տնտեսական, քաղաքական, հասարակական և միջպետական հարաբերություններ: Առաջնահերթ պայման է այդպիսի փաստաթղթերի հստակությունն ու ճշգրտությունը, որը նշանակում է, որ հատուկ ուշադրություն պետք է դարձվում դրանց ոչ միայն իրավական, այլև լեզվական ձևակերպումներին. իմաստային, ձևաբանական, շարահյուսական, կառուցվածքային և ոճագործառական առանձնահատկություններին:

Ինչ վերաբերում է ընդհանրապես իրավաբանական խոսույթին, այն հիմնված է իրավունքի և լեզվի սերտ համագործակցության վրա և պարունակում է օրենքի հետ ուղղակիորեն առնչվող իրավական դրույթներ և լեզվական միավորներ՝ հանդիսանալով իրավալեզվաբանության գիտակարգի ուսումնասիրության առարկա: Այս դեպքում առավել կարևորվում է նյութի իրավաբանական կողմը՝ իհարկե հաշվի առնելով նաև լեզվականը: Երբ տվյալ խոսույթը կառուցվում է լեզվի և իրավունքի փոխհարաբերման, փոխազդման հիմքի վրա, այն ավելի շուտ հայտնվում է լեզվաիրավաբանության ոլորտում, որտեղ շեշտը դրվում է իրավական համատեքստում արտահայտվող լեզվական տարրերի վրա: Այս դեպքում լեզվի գործառական-հաղորդակցական նշանակությունն ավելի մեծ է, քանի որ շեշտադրվում են ոճագործառական և միջգիտակարգային խոսույթային մի շարք առանձնահատկություններ: Այս առումով ատենախոսը ճիշտ ընտրություն է կատարել՝ քննելով իրավական փաստաթղթերը լեզվաիրավագիտության լույսի ներքո, ոլորտ, որն ակտիվորեն զարգանում է, քանի որ հասարակության զարգացման ներկայիս փուլում իրավական փաստաթղթերի ճշգրտությունն ու հուսալիությունը, դրանցում արձարծվող խնդիրներն առավել հրատապ լուծումներ են

պահանջում: Եվս մեկ կարևոր հանգամանք՝ իրավական պաշտոնական փաստաթղթերը հարում են ինչպես իրավաբանական, այնպես էլ պաշտոնական-գործարար խոսույթին: Հենց այս միջգիտակարգայնությունն էլ պայմանավորում է իրավական փաստաթղթերի գործառական-հաղորդակցական առանձնահատուկ բնույթն ու կառուցվածքը լեզվական արտահայտման բոլոր մակարդակներում:

Ատենախոսության համար առանձնակի կարևորություն ունի իրավական փաստաթղթերի թարգմանությունը, որն, անկասկած հեշտ գործընթաց չէ, քանի որ թարգմանիչը պետք է լավագույնս տիրապետի ոչ միայն սկզբնաղբյուր և թիրախ լեզուներին, այլև որոշակի չափով ծանոթ լինի նաև իրավաբանական և պաշտոնական-գործարար խոսույթներին բնորոշ բառապաշարի, եզրույթների, հնաբանությունների, հապավումների, տարբեր կառույցների և վերջիններիս գործառական կիրառությամբ պայմանավորված այլ միավորների թարգմանական նրբություններին:

Ասվածից հետևում է, որ սույն ատենախոսության ուսումնասիրության ոլորտը իրավաբանական խոսույթն է, որը որոշակի տիրույթում գործող մասնագիտական համակարգ է, որի տարրերը սերտորեն հարաբերակցվում են մեկ ընդհանուր հաղորդակցական-տեղեկատվական գործառույթի սահմաններում, իսկ հետազոտության առարկան իրավաբանական և պաշտոնական-գործարար խոսույթների գործառական տարատեսակ համարվող իրավական փաստաթղթերի լեզուն է, հատկապես միջազգային պայմանագրերի՝ համապատասխան հայերեն փաստաթղթերի հետ զուգադիր համեմատությամբ և թարգմանական խնդիրների պարզաբանմամբ:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է ժամանակակից աշխարհում ներպետական և միջազգային հարաբերությունները կարգավորող պաշտոնական փաստաթղթերի հանրության կյանքում կատարած կարևորագույն դերով՝ հատկապես արդի հայ իրականության մեջ, երբ իրավական փաստերի ճշգրիտ ներկայացումը և դրանց գրագետ թարգմանությունը էականորեն նպաստում են օրենքի գերակայության պահպանմանը, իրավական համակարգերի նկատմամբ հանրային վստահության ամրապնդմանը:

Ատենախոսության գիտական նորույթը իրավական փաստաթղթերում/պայմանագրերում առկա լեզվական միավորների ուսումնասիրությունն է և դրանց համարժեք ճշգրիտ թարգմանությունը՝ հաճախ նաև հայ արտալեզվական համատեքստի հաշվառմամբ: Հայաստանի կողմից կնքված միջազգային պայմանագրերի անգլերեն և հայերեն տարբերակները

որպես իրավապաշտոնական գործառնական տարատեսակ վերլուծելու փորձը նոր է և խոստումնալից:

Հատկապես կարևորում են ատենախոսության մեջ հետազոտվող, վերլուծվող, համեմատվող փաստական նյութը (մոտ 1000 էջ), որն ընդգրկում է անգլերեն և հայերեն իրավական պաշտոնական փաստաթղթեր, որոնք հիմնականում Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված կարևոր միջազգային պայմանագրեր են: Որպես այդ նյութի վերլուծության արդյունավետ մեթոդներ կիրառվել են վերլուծական հետազոտության մեթոդը, որակական և քանակական վերլուծության մեթոդները, լեզվաոճական վերլուծության մեթոդը, կորպուսային վերլուծության մեթոդը, համեմատական իրավիճակային-փաստարկային քննության մեթոդը: Վերջինիս շրջանակներում կիրառվել են նաև իմաստաբանական և կառուցվածքային (բառային, ձևաբանական, շարահյուսական) հետազոտության մեթոդները:

Հետազոտության նպատակն է լեզվաիրավագիտության շրջանակներում ուսումնասիրել իրավական փաստաթղթերի ոճագործառնական և թարգմանական առանձնահատկությունները, քննել դրանցում կիրառվող լեզվական նշույթները՝ փաստելով, որ փաստաթղային ձևակերպում ստացած դրույթի տրամաբանության խախտումը, ձևակերպման անճշտությունը, եզրույթների անորոշությունը կարող են թույլ տալ խեղաթյուրել փաստաթղթի կամ պայմանագրի իրավական հիմքը և սխալ կիրառել այն: Նշված նպատակին հասնելու համար ատենախոսության մեջ առաջադրված **խնդիրների** ճիշտ լուծումները պայմանավորում են հետազոտության **տեսական և գործնական արժեքը**՝ նպաստելով ոլորտի հետագա ընդլայնմանն ու զարգացմանը, նոր գաղափարների ու տեսությունների, նյութի քննության նոր մեթոդների ու ձևերի ներմուծմանը, գործառնական տեսության հետագա զարգացմանը և լեզվաիրավագիտության, լեզվի մշակույթի, հաղորդակցության տեսության և գործառնական ոճագիտության բնագավառի բազմաբնույթ հետազոտական աշխատանքներում, անգլերենի գործնական ուսուցման ոլորտում հետազոտության նյութի և դրույթների արդյունավետ կիրառմանը: Ըստ էության, Վարդուհի Միրիջանյանի հետազոտությունը իրավական փաստաթղթերի ամփոփ տեսական և գործնական հետազոտություն է՝ հանգամանալից և ուշագրավ լեզվական և թարգմանական վերլուծություններով:

Ատենախոսությունը բաղկացած է բովանդակությունից, ներածությունից, երկու գլխից՝ համապատասխան ենթագլուխներով և ծանոթագրություններով, եզրակացությունից, գրականության ցանկից և հապավումների՝ AntConc թարգմանական գործիքի կիրառմամբ կատարված հետազոտության տվյալները պարունակող հավելվածից:

Հիմնավորված են տենախոսության առաջին գլխում ներկայացված իրավաբանական և պաշտոնական-գործարար խոսույթների գործառական դասակարգումները և պարզաբանված իրավական փաստաթղթերի այդ համակարգում գրաված տեղն ու դերը, ինչպես նաև մանրամասն ներկայացված են խնդրին վերաբերող բառիմաստի, եզրույթների, հապավումների, համառոտագրությունների, բառակրկնությունների բազմաբաղադրիչ կապակցությունների, ձևաբանական կոնկրետ նորմերի, շարահյուսական կառույցների դերին և դրանց թարգմանական առանձնահատկություններին առնչվող վերլուծությունները:

Երկրորդ գլուխում անդրադարձ է կատարվում փաստաթղթերի թարգմանության տեսական դրույթներին, թարգմանական գործընթացին, ինչպես նաև առաջացող իրավական հայեցակարգային բացերին: Նշվում է, որ եզրույթային իմաստային համարժեքները մեծապես պայմանավորում են թարգմանության որակը, ճշգրտությունը, բնագրին համապատասխանությունը, թարգմանության գործընթացում կարևորվում է փաստաթղթի իրավական հիմքը և այն պայմանավորող արտալեզվական գործոնները, մանրակրկիտ վերլուծվում և համեմատվում են փաստաթղթի անգլերեն և հայերեն տարբերակներում առկա հնաբանությունները, հոմանիշ գույգերը, բարդ նախադասությունները, կրավորական և դերբայական կառույցները, փաստաթղթային անգլերեն և հայերեն հապավումները: Վերջինիս կորպուսային հետազոտությունը ի ցույց է դնում ինչպես ճշգրիտ, այնպես էլ որոշակի թերություններով կատարված թարգմանական արդյունքներ:

Ըստ իս, ներկայացված ատենախոսությունը բովանդակալից, ամփոփ տեսական և գործնական հետազոտություն է՝ հանգամանալից վերլուծություններով: Այդ են վկայում նաև հեղինակի հրատարակած հոդվածները, հետազոտության եզրակացությունները, լեզվաիրավագիտության ոլորտին առնչվող օգտագործված գրականության հարուստ ցանկը:

Գնահատելով հետազոտությունը կարևորությունը՝ կանգ առնենք նաև որոշ դիտարկումների, նկատառումների, հարցադրումների վրա.

- Ի՞նչ նկատի ունեք, երբ ասում եք (էջ 13), որ պաշտոնական փաստաթղթերում առկա է վերնշանային մակարդակի լեզվական միավորների լիակատար բացակայություն: Հայտնի է, որ, որպես գիտական ոճի տարատեսակ, իրավաբանական խոսույթն ինքը կարող է ներառել առաջնային գործառույթ չիրացնող վերնշանային մակարդակի լեզվական միավորներ, և իրավական փաստաթղթերը որպես իրավաբանական խոսույթի գործառական տարատեսակ ընդհանուրի և մասի հարաբերակցությամբ կարող են հանդիսանալ այդ հատկանիշի կրողը:

- Ներածության մեջ մեթոդաբանությունը ներկայացնելիս նշում էք համեմատական իրավիճակային-փաստարկային քննության մեթոդը: Խնդրում եմ պարզաբանել, թե ի՞նչ է իրենից ներկայացնում այս մեթոդը և կարծում եմ, որ մեթոդի անգլերեն անվանումը կարելի էր ներկայացնել փակագծում:
- Բուն իրավաբանական եզրույթների շարքում (էջ 31) որպես *in maximum favour* բառակապակցության թարգմանությունն նշում եք *առավելագույն բարենպաստում* եզրույթային կապակցությունը: Այս միավորը արձանագրված է Բառարաններում, թե՞ զուտ թարգմանչի մտահղացումն է:
- Նշում եք (էջ 50) իրավաբանական խոսույթի արտահայտման երկու ձև՝ օրենքի լեզու (*language of the law*) և իրավական լեզու (*legal language*): Խնդրում եմ բացատրեք այս երկու հասկացությունների տարբերությունը:
- Կորպուսային վերլուծության ենթարկած գույքի առքուվաճառքի միջազգային պայմանագրի թարգմանական թերությունների շարքում կարո՞ղ եք նշել կոնկրետ մեկ օրինակ:
- Ավելացնեմ, որ աշխատանքում առկա են մանր տեխնիկական թերություններ և տեքստում նշված երկու հղում տեղ չեն գտել գրականության վերջնական ցանկում:

Վերոնշյալ դիտարկումները կրում են մասնակի բնույթ և չեն ազդում կատարած հետազոտության գիտական արժեքի վրա: Կատարված հետազոտությունը գրագետ, գիտական լեզվով շարադրված ավարտուն աշխատանք է, որի հիմնադրույթները պարունակում են որոշակի գիտական նորույթ և հիմնավորված մոտեցումներ: Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլվել են վեց գիտական հոդվածներում, իսկ կիրառված մոտեցումները՝ քննարկվել Անգլիական բանասիրության ամբիոնի նիստերում: Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը՝ ներառելով դրա հիմնական դրույթներն ու արդյունքները: Ատենախոսությունն ու սեղմագիրը շարադրված են մատչելի լեզվով, ձևավորումը համապատասխանում է ներկայացվող պահանջներին: Կարելի է նշել, որ հեղինակը կատարել է իր առջև դրված խնդիրները՝ հիմնավոր կերպով ներկայացնելով թեմային առնչվող տեսագործական նյութը:

Այսպիսով, Վարդուհի Գազիկի Միրիջանյանի *Իրավաբանական փաստաթղթերի թարգմանության խնդիրը գործառական-հաղորդակցական լույսի ներքո* թեմայով ատենախոսությունն իր արդիականությամբ, գիտական մակարդակով, խնդիրների ընդգրկմամբ, ստացված արդյունքների հիմնավորվածությամբ և կիրառման հնարավորություններով

համապատասխանում է Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ) կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին: Ատենախոսության հեղինակն արժանի է Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս,


ԵՊՀ Անգլիական բանասիրության ամբիոնի վարիչ, Բ.գ.դ., պրոֆեսոր՝

A. Knigyan

Աննա Տարիելի Կնյազյան

Ա. Կնյազյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ գիտական քարտուղար, Բ.գ.թ., դոցենտ՝



V. Khachatryan

Մերի Վազգենի Հովհաննիսյան

11.11.2025